## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵԲԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Դեբետ համայնք , գ.Դեբետ , 6 - 8 0 - 55

# ՈՐՈՇՈՒՄ

«08» Հունվարի 20 20 թվականի N 1

## ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՆԵԼԼԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ (ԿԱՄ) ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Նելլի Հարությունյանի 2020 թվականի Դեկտեմբերի 30-ի հայտը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 17-րդ կետով, 40-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և ՀՀ կառավարության 2007թվականի հուլիսի 19-ի թիվ 843-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ, 4-րդ և 6-րդ կետերով՝

Ո Ր Ո Շ Ու Մ ԵՄ.

1. Դեբետ համայնքի 2-րդ փող., թիվ 4 հասցեում գործող անհատ ձեռնարկատեր

Նելլի Հարությունյանի հայտը բավարարել և նրան տալ ոգելից և ալկոհոլային խմիչքների և /կամ/ ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն 08.01.2020թ.-31.03.2020թ.:

2.Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ եռօրյա ժամկետում սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվությունը:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՇՈՏ ՂԱԶԱՐՅԱՆ

2020թ.______________ ___
գ.Դեբետ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵԲԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Դեբետ համայնք , գ.Դեբետ , 6 - 8 0 - 55

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<< 20>> հունվարի 2020 թվականի N 2- Ա

ԴԵԲԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՀԵՐԹԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 2009 թվականի հունվարի 19-ի N 03-Ն հրամանի հավելվածի 20-րդ կետով՝

որոշում եմ.

1. Հաստատել Դեբետ համայնքի ղեկավարի և համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների 2020 թվականի ամենամյա արձակուրդների տրամադրման հերթականությունը (նախնական գրաֆիկը).

| Աշխատակազմի աշխատակցի անուն, ազգանունը | Հաստիքի անվանումը | 2020 թվականի ամիսը |
|---|---|---|
| Աշոտ Ղազարյան | Համայնքի ղեկավար | մարտ |
| Կարեն Մալերյան | Համայնքի ղեկավարի օգնական | ապրիլ |
| Անուշ Սարգսյան | Աշխատակազմի քարտուղար | մայիս |
| Ժաննա Պողոսյան | Աշխատակազմի առաջատար մասնագետ-հաշվապահ | հունիս |
| Հրաչ Ավագյան | Աշխատակազմի 1-ին կարգի մասնագետ | հուլիս |
| Նորայր Սարգսյան | Աշխատակազմի 2-րդ կարգի մասնագետ | օգոստոս |
| Կարինե Պողոսյան | Տեխնիկական աշխատող | սեպտեմբեր |

2. Սույն հրամանի մասին տեղեկացնել աշխատակազմի վերոնշյալ աշխատակիցներին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՇՈՏ ՂԱԶԱՐՅԱՆ

2020 թ. ______________ ___
գ. Դեբետ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵԲԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Դեբետ համայնք , գ.Դեբետ , 6 - 8 0 - 55

# Ո Ր Ո Շ Ու Մ

<< 20>> __հունվարի__ 20_20_ թվականի N __3__ - Ա

## ԴԵԲԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՀԵՐԹԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 2009 թվականի հունվարի 19-ի N 03-Ն հրամանի հավելվածի 20-րդ կետով՝

որոշում եմ.

1. Հաստատել Դեբետ համայնքի համայնքային ենթակայության կազմակերպությունների աշխատակիցների 2020 թվականի ամենամյա արձակուրդների տրամադրման հերթականությունը (նախնական գրաֆիկը).

| Աշխատակազմի աշխատակցի անուն, ազգանունը | Հաստիքի անվանումը | 2020 թվականի ամիսը |
|---|---|---|
| Աղունիկ Ավետիքյան | Դեբետ համայնքի <<Արևիկ>> մանկապարտեզ ՀՈԱԿ-ի տնօրեն | օգոստոս |
| | | |
| | | |

2.Սույն հրամանի մասին տեղեկացնել աշխատակազմի վերոնշյալ աշխատակիցներին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՇՈՏ ՂԱԶԱՐՅԱՆ

2020 թ. ________________ ___
գ. Դեբետ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵԲԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Դեբետ համայնք, գ.Դեբետ, 6 - 8 0 - 55

<<21>>-ը հունվարի 2020 թվականի N 4 -Ն

# ՈՐՈՇՈՒՄ

## ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԴԵԲԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ և ԾԱԽՍԵՐԻ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի
38-րդ հոդվածի դրույթներով
որոշում եմ՝

Հաստատել Դեբետ համայնքի 2020 թվականի բյուջեի եկամուտների և ծախսերի եռամսյակային համամասնությունները համաձայն հավելվածի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՇՈՏ ՂԱԶԱՐՅԱՆ

2020 թ. ______________ ___
գ. Դեբետ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵԲԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Դեբետ համայնք, գ.Դեբետ, 6 - 8 0 - 55

«08» Հունվարի 20 20 թվականի N 5

### ՈՐՈՇՈՒՄ

### ԴԵԲԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ 06-034-0068-0005 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ Հողային օրենսգրքի հոդվածներով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 29.11.2005թ. թիվ 2387-Ն որոշումով և հիմք ընդունելով ՀՀ ԿԱԱԳ կադաստրի պետական կոմիտեի <<Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին>> որոշումը

Որոշում եմ

ՀՀ Լոռու մարզի Դեբետ համայնքի 06-034-0068- 0005 ծածկագրի տակ գտնվող 0.1237հա հողամասին տրամադրել ՀՀ Լոռու մարզ, գ. Դեբետ 6-փ փողոց, 35 փոստային հասցեն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՇՈՏ ՂԱԶԱՐՅԱՆ

20 20 թ. _______________ ____
գ. Դեբետ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵԲԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Դեբետ համայնք, գ.Դեբետ, 6 - 8 0 - 55

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«23» Հունվարի 2020 թվականի N 6

## ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի հոդվածներով, պետական սեփականություն հանդիսացող հողերից Դեբետ համայնքին անհատույց սեփականության իրավունքով փոխանցված հողերի ՀՀ կառավարության 08.04.2004թ թիվ 438-Ն որոշումը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ, 57-րդ և 59-րդ հոդվածի 3-րդ կետով, 60-րդ հոդվածով ՀՀ ՏԻՄ օրենքի 42-րդ հոդվածով, ՀՀ կառավարության պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին 12.04.2011թ թիվ 286 որոշումը**

**Որոշում եմ՝**

1. Դեբետ համայնքում գտնվող և համաձայն ՀՀ կառավարության 08.04.2004թ թիվ 438-Ն որոշմամբ համայնքին անհատույց սեփականության իրավունքով փոխանցված 06-034-0101-0001 ծածկագրի տակ գտնվող հողամսից տարանջատված 0.3 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահող գործառնական նշանակության հողամասի նկատմամբ ճանաչել Դեբետ համայնքի սեփականության իրավունքը:

2. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

3. Անշարժ գույքը չի գտնվում ՀՀ ՀՕ 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում և չի հակասում քաղաքաշինական նորմերին և չի առաջացնում սերվիտուտ:

4. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Լոռու տարածքային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՇՈՏ ՂԱԶԱՐՅԱՆ

2020 թ. _______________ ____
գ. Դեբետ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵԲԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Դեբետ համայնք , գ.Դեբետ , 6 - 8 0 - 55

# ՈՐՈՇՈՒՄ

«23» Հունվարի 2020 թվականի N 7

## ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի հոդվածներով, պետական սեփականություն հանդիսացող հողերից Դեբետ համայնքին անհատույց սեփականության իրավունքով փոխանցված հողերի ՀՀ կառավարության 08.04.2004թ թիվ 438-Ն որոշումը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ, 57-րդ և 59-րդ հոդվածի 3-րդ կետով, 60-րդ հոդվածով ՀՀ ՏԻՄ օրենքի 42-րդ հոդվածով, ՀՀ կառավարության պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին 12.04.2011թ թիվ 286 որոշումը**

**Որոշում եմ՝**

1.Դեբետ համայնքում գտնվող և համաձայն ՀՀ կառավարության 08.04.2004թ թիվ 438-Ն որոշմամբ համայնքին անհատույց սեփականության իրավունքով փոխանցված 06-034-0101-0001 ծածկագրի տակ գտնվող հողամսից տարանջատված 0.28 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահող գործառնական նշանակության հողամասի նկատմամբ ճանաչել Դեբետ համայնքի սեփականության իրավունքը:

2.Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

3.Անշարժ գույքը չի գտնվում ՀՀ ՀՕ 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում և չի հակասում քաղաքաշինական նորմերին և չի առաջացնում սերվիտուտ:

4. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Լոռու տարածքային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՇՈՏ ՂԱԶԱՐՅԱՆ

2020 թ. ______________ ___
գ. Դեբետ